ՀԱՑԿԱԶՈՒՆ–ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- **Երվանդունիներ**, թագավորական հարստություն Հայաստանումմ.թ.ա. 570–մ.թ. 72 թվականներին: Կոչվում է հիմնադրի՝ Երվանդ Սակավակյացի անունով: Որպես թագավորներ և սատրապներ Հայաստանում իշխել են մ.թ.ա. 570-201 թվականներին: Պատմահայր Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ մ.թ.ա. 7-րդ դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնվել էր Հայկազունների տոհմի իշխանությունը՝ Սկայորդու գլխավորությամբ:

- **Երվանդ Ա Սակավակյաց** Հայոց թագավոր մ.թ.ա. 570-560-ական թվականներին: Երվանդի մասին ավանդախառն տեղեկություններ են հաղորդում Մովսես Խորենացին և Քսենոփոնը: Խորենացին նրան անվանում է «Սակավակյաց»՝ նկատի ունենալով նրա թագավորելու կարճատևությունը: Ինչպես նշում է Քսենոֆոնը, Երվանդն ունեցել է ընդարձակ տիրապետություն, շուրջ 3000 արծաթ տաղանդ հարստություն, 40 հազար հետևակային և 8 հազար հեծելակային զինվորական ուժ: Երվանդն իր արքունիքը շրջապատել է հայ ավագանու ներկայացուցիչներով՝ «պատվավոր հայերով»: Ելնելով Երվանդունիք գավառի տեղադրությունից՝ ուսումնասիրողները ենթադրում են, որ Երվանդի օրոք հայկական թագավորության մայրաքաղաքը եղել է Տուշպա-Վանը:

ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մ.թ.ա. 585-550 թվականներին Աժդահակ թագավորի դեմ կռվում պարտվելով՝ Երվանդը ճանաչել է նրա գերիշխանությունը, վճարել է տարեկան 50 տաղանդ հարկ, հայկական զորամասերով մասնակցել Մարաց արշավանքներին:

- Նրա օրոք թագավորության սահմանները հյուսիս-արևելքում հասնում էին Կուր գետ, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք:

- **Տիգրան Երվանդյան** Հայոց թագավոր մ.թ.ա. մոտ 560-535 թվականներին: Հաջորդել է հորը՝ Երվանդ Ա Սակավակյացին: Վարել է Հայաստանը Մարաստանի գերիշխանությունից ազատագրելու քաղաքականություն՝ նրա դեմ պայքարում կողմնորոշվելով դեպի նոր ձևավորող Աքեմենյան Պարսկաստանը: Այդ մասին են վկայում Տիգրան Երվանդյանի և Աքեմենյան տերության հիմնադիր Կյուրոսի անձնական բարեկամության վերաբերյալ պահպանված ավանդախառն տեղեկությունները:

ՏԻԳՐԱՆ ԵՐՄԻՀՅԱԼԵԱՆ
Տիգրան առաջ Երեւանցի.
27

ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ք.ա 553թ Կյուրոս Մեծը և Տիգրանը ապստամբում են Մարաստանի դեմ: Եվ հենց վճռական պայքարում Տիգրանը սպանեց Աժդահակին:

- Ք.ա 539թ դաշնակից զորքերը գրավեցին Բաբելոնը, որից հետո Տիգրանը դարձավ նաև տերության արևմտյան մասի փոխարքան:

- Տիգրանին հաջորդել է Վահագն Երվանդյանը (մ.թ.ա. 535-515)։ Մովսես Խորենացին նմանեցրել է նրան հայոց աստվածներից Վահագնի հետ։ Այս թագավորների օրոք Վանը շարունակում էր մնալ հայոց պետության մայրաքաղաք։ Երկրորդ կարևոր քաղաքն էր Անի-Կամախը (Բարձր Հայքում), որը հոգևոր ու մշակութային կենտրոն էր։ Իրանում գահ է բարձրանում Կյուրոսի որդի Կամբյուսես II-ը (մ.թ.ա. 529-մ.թ.ա. 522)Աքեմենյան կայսրությունում քաղաքական վիճակն արմատապես փոխվեց, երբ իշխանության գլուխ եկավ Դարեհ Ա Վշտասպ թագավորը (մ.թ.ա. 522-մ.թ.ա. 486)։

- ԲԵՀԻՍԹՈՒՆՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ և ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

- **Բեհիսթունի արձանագրություն**, Աքեմենյան արքա Դարեհ Ա հրամանով մ.թ.ա. 523-521 թթ Բեհիսթուն ժայռի վրա :Ըստ նշանակության՝Աքեմենյան Պարսկաստանի դարաշրջանին պատկանող մինչ այժմ գտնված ամենակարևոր արձանագրությունն է: Վերծանվել է XIX դարի 30-40-ական թթ անգլիացի գիտնական Ռոուլինսոնի կողմից:

Արձանագրության ժամանակակից տեսքը

- …Դարեհ թագավորն ասում է. Արդ՝ Արմենիա («Արմինա») ուղարկեցի մի արմեն («արմենիյա») իմ Դադարշիշ անունով ծառային, և այսպես պատվիրեցի. «Գնա նվաճի այդ ապստամբ ժողովուրդը, որ ինձ չի հպատակվում»: Դադարշիշը գնաց Արմենիան նվաճելու: Երբ նա եկավ Արմենիա՝ ապստամբները դուրս եկան Դադարշիշի դեմ նրան ճակատամարտ տալու համար:…Դարեհ թագավորն ասում է. այնուհետև Արմենիա ուղարկեցի Վահումիսա անունով մի պարսկի, իմ ծառային, և այսպես պատվիրեցի. «գնա, նվաճիր այդ ապստամբ ժողովուրդն, որ ինձ չի հնազանդվում»: Վահումիսան գնաց Արմենիան նվաճելու: Ապստամբները հավաքվեցին և դուրս ելան Վահումիսայի դեմ պատերազմի: Ասորեստանի մեջ Իզալա անունով մի երկիր կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն ինձ օգնեց: Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ սպանեց ապստամբների բանակից:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

- Աքեմենյան տերությունը Ք.ա 520թ բաժանվում է 20 վարչական միավորների՝ սատրապությունների: Հայաստանը կազմում է XIII սատրապությունը: Հայաստանը՝ որպես սատրապություն, տերության կազմում մնաց մինչև Ք.ա 331թ:Այդ ժամանակաշրջանի մասին տվյալները սակավաթիվ են:

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք.Ա 331-201 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

- ***Ալեքսանդր Մակեդոնացին (Մակեդոնիայի թագավոր մ. թ. ա. 336–323 թթ.) զորավար էր, պետական գործիչ: Նրա ստեղծած տերությունը ձգվում էր Միջերկրական ծովից մինչև Հնդկական օվկիանոս:***

«Հաղթանակը չեն գողանում, այն ձեռք են բերում»

ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ք.ա 334թ մակեդոնա-հունական զորքերն Ալեքսանդրի գլխավորությամբ անցնում են Հելլեսպոնտոսը և շուտով Գրանիկոս գետի ափին պարտության մատնում պարսից ուժերին:
- Ք.ա 333թ Իսոսի ճակատամարտում պարսից զորքը պարտություն է կրում:
- Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ք.ա 331թ Գավգամելայի մոտ, կրկին հաջողությունը Ալեքսանդրի կողմն էր:

- Մի քանի տարի անց Մակեդոնացին Մենոն զորավարին ուղարկում է Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջան, որը հայտնի էր դեռևս Ք.ա III հազարամյակից: Դրանից հետո Ալեքսանդրը նոր զորք չուղարկեց Հայաստան:

- Ալ. Մակեդոնացին մահացավ Ք.ա 323թ: Նրա արշավանքներով Առաջավոր Ասիայում սկզբնավորվում է հունականության դարաշրջանը:

8 ԶԱՐՄԱՆԱԼԻ ՓԱՍՏ Ալեքսանդր Մակեդոնացու մասին

- **Նրան ուսուցանել է Արիստոտելը, բայց այլ փիլիսոփաներ ևս ազդել են նրա մտածելակերպի ու գիտակցության վրա:**
- Արիստոտելի իմաստունությունը Ալեքսանդրը սպունգի պես ընկալել էր: Ըստ լեգենդի, երբ դեռ նա Հունաստանում արքայազն էր, այցելում էր հայտնի ճգնավոր Դիոգենեսին, ով հրաժարվել էր սոցիալական նրբակեցությունից ու ֆնում է մի մեծ կավե տակառում: Ալեքսանդր մոտենում է հանրային հրապարակում գտնվող այդ իմաստունին և հարցնում է, թե կա՞ մի բան, որ կարող են անել մեծահարուստներն իր համար: «Այո»,- պատասխանում է իմաստունը,_ «մի կողմ քաշվիր. փակում ես արևս»:Ալեքսանդրը հիացած էր և Դիոգենեսի մերժումից տպավորված ասում է «Եթե ես չլինեի Ալեքսանդրը, կլինեի Դիոգենես»:

- **15 տարվա պայքարում Ալեքսանդրը ոչ մի անգամ չպարտվեց:**
- **Ավելի քան 70 քաղաք Ալեքսանդրը կոչել է իր անունով և մեկն էլ իր ձիու անունով:**
- **Ալեքսանդրը, իր ապագա կնոջը՝ Ռոքսանային տեսնելով, սիրահարվում է առաջին հայացքից:**
- **Ալեքսանդրի վրայից միշտ բուրավետ հոտեր էին գալիս:** Անուշ բուրելը այդ ժամանակ բնորոշ էր աստվածներին :Ալեքսանդրն իրեն բացեիբաց հայտարարել էր Զևսի որդի 331 մ.թ.ա Սիվահ կատարած այցելության ժամանակ:

- **Պարսիկներին պարտության մատնելուց հետո Ալեքսանդրը հագնվում էր նրանց նման:**

- **Ալեքսանդրի մարմինը պահպանվել է մեղրի մեծ տաշտի մեջ:** Պլուտարքոսը գրում է, որ Ալեքսանդրի մարմինը սկզբում մշակել ու բալզամապատել են Բաբելոնում եգիպտացի մասնագետները, բայց առաջատար վիկտորիանական եգիպտագետներից մեկը ՝ Ա Վոլիսը ենթադրում էր, որ Ալեքսանդրի աճյունը թաղել են մեղրի տաշտի մեջ քայքայումը կանխելու համար:

- **Ալեքսանդրի մահվան պատճառը մնում է հին աշխարհի չբացահայտված գաղտնիքներից մեկը:** Մեր թվարկությունից առաջ 323 թ-ին երեկույթի ժամանակ Ալեքսանդր Մակեդոնացին ընկավ գետնին մի գավաթ գինի խմելուց հետո: Երկու շաբաթ անց 32-ամյա ղեկավարը մահացավ: Հաշվի առնելով, որ Ալեքսանդրի հորը սպանել էր իր թիկնապահը, կասկածն ընկավ Ալեքսանդրին շրջապատողների վրա: Իսկ որոշ հին կենսագիրներ ենթադրում են, որ Արիստոտելը, ով կապ ուներ Ալեքսանդրի ընտանիքի հետ, կարող էր նույնպես կապ ունենալ այդ ամենի հետ: Ժամանակակից բժշկական փորձագետները ենթադրում են, որ մալարիան, թոքերի վարակը, լյարդային անբավարարությունը կամ որովայնային տիֆը կարող են Ալեքսանդրի մահվան պատճառ լինել:

ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

- «Ես մահանում եմ շատ բժիշկների օգնությունից»
- «Ինչքան շատ բան է մարդ ունենում, այդքան ավելի ագահությամբ է ձգտում ունենալ այն ինչ չունի»
- «Ես պարտավոր եմ հորս, որ նա ինձ կյանք տվեց, և ուսուցիչներիս, որոնք ինձ սովորեցրին արժանավայել ապրել»
- «Ոչխարների բանակը, որը կառավարում է առյուծը, ավելի ուժեղ է քան առյուծների բանակը, որը կառավարում է ոչխարը»
- «Աշխարհում չկա անհնարին ոչինչ այն մարդու համար, ով կատարում է փորձեր»
- «Ես իմ մահից հետո կցանկանայի վերադառնալ, որպեսզի տեսնեի, թե ինչպես են մարդկ վերաբերվում իմ արարքներին»

- Ալ. Մակեդոնացու մահից հետո տերությունը բաժանվեց մի քանի մասի, որոնցից ամենախոշորը Սելևկյան տերությունն էր: Հետագայում սրվեցին հարաբերությունները Սելևկյան տերության և Հայաստանի միջև: Ք.ա. 201թ վերջ դրվեց Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանությանը:

- ՀԱՅԿԱԶՈՒՆ-ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՐՀԵՍՏ, ԱՌԵՎՏՈՒՐ

- Թագավորությունը մեծ հաջողությունների հասավ գյուղատնտեսության և արհեստների զարգացման ասպարեզում: Երկրագործության համար նպաստավոր շրջաններ էին Արարատյան, Շիրակի, Տարոնի, Բագրևանդի, Բասենի դաշտերը: Լեռնային շրջանները հնարավորություն էին տալիս անասնապահության զարգացման համար: Բարգավաճում ապրեց տնտեսությունը:

- Ք.ա 4-3-րդ հազարամյակներից՝ Հայաստանի տնտեսության մեջ առանցքային էր **մետաղածուլության** դերը:
- Ք.ա 4-3-րդ դարերում տնտեսության մեջ կարևոր դեր էր խաղում ներքին և արտաքին առևտուրը: Հայաստանով էին անցնում ժամանակի մեծ նշանակություն ունեցող առևտրական ճանապարհներ:

ՔԱՂԱՔՆԵՐ

- Հայկազուն-Երվանդունիների պետության մայրաքաղաքը Արմավիրն էր: Հետագայում Երվանդ Դ-ն կառուցեց Երվանդաշատ մայրաքաղաքը: Ախուրյանի աջ ափին կառուցվեց Բագարան սրբավայր-քաղաքը:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Կառավարման համակարգը ժառանգություն են ստացել Վանի թագավորությունից
Ք.ա 7-6-րդ դարերում արքան կրում էր «Հայոց թագավոր» տիտղոսը:
ԱՐՔԱՆ երկրի գերագույն տերն էր;
Արքայից հետո կարևորագույն դեմքը ՔՐՄԱՊԵՏՆ էր: